

Տեղեկատվության ազատությունը Երեւանի վարչական շրջաններում

Գեորգ Հայրապետյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2010 թվականի հունիսի 28-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց Երեւան քաղաքի բոլոր վարչական շրջանների ղեկավարներին՝ նպատակ ունենալով պարզել, թե տվյալ վարչական շրջանում որտեղ են գործում վճարովի ավտոկայանատեղեր, կա՞ որեւէ իրավական ակտ, որի հիման վրա Երեւանի փողոցներում անհայտ անձինք ավտոմեքենայի կայանման համար գումար են գանձում, օրինական են արդյոք այդ գանձումները, եթե ոչ, ապա ում կարելի է բողոքարկել ավտոկայանման համար գումար պահանջելու դեպքում: Ինֆորմացիայի ազատության կենտրոնը խնդրել էր տրամադրել նաեւ տեղեկություն այն մասին կնքվե՞լ են արդյոք պայմանագրեր Երեւանի վարչական շրջանների վճարովի ավտոկայանատեղերը սպասարկելու համար եւ խնդրել էր տրամադրել այդ պայմանագրերի պատճենները:

ԻԱԿ-ի այս նախաձեռնությունը հնարավորություն տվեց ոչ միայն պարզել, թե քանի վճարովի ավտոկայանատեղի կա Երեւանում եւ որքանով են օրինական ավտոկայանման համար կատարվող գանձումները, այլ նաեւ ցույց տվեց, թե որքանով են վարչական շրջանները կատարում “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի պահանջները:

Ինչպես նշվեց՝ ԻԱԿ-ի՝ տեղեկատվություն ստանալու հարցումները հնարավորություն տվեցին պարզել նաեւ, թե որքանով են վարչական շրջանները գործում “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի պահանջներին համաձայն:

Նշենք, որ ԻԱԿ-ի որեւէ հարցում անպատասխան չի մնացել:

Նախ՝ վարչական շրջաններից ստացված պատասխանների բովանդակության մասին. պարզվում է՝ Արաբկիր, Էրեբունի, Ավան, Շենգավիթ, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն վարչական շրջանների ենթակայության ներքո վճարովի ավտոկայանատեղեր չեն գործում: Այդ են վկայում նրանցից ստացված պատասխան գրությունները: Հետեւաբար նաեւ չկան ավտոկայանատեղերի սպասարկման համար կնքված պայմանագրեր: Պատասխան գրություններում նշված էր, որ վարչական շրջաններում անհայտ անձանց կամ կազմակերպությունների կողմից ավտոկայանման համար ապօրինի գումարների գանձման փաստեր չեն արձանագրվել: Արաբկիր եւ Դավթաշեն վարչական շրջաններն էլ խորհուրդ տվեցին ավտոկայանման համար ապօրինի գումար պահանջելու դեպքում դիմել իրավասու պետական՝ իրավապահ մարմիններին: Այսպիսով, վերոնշյալ վարչական

շրջաններում ավտոկայանման համար որեւէ անձի կողմից գումար պահանջելն անօրինական է:

Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք եւ Աջափնյակ վարչական շրջանների պատասխան գրությունների համաձայն՝ այստեղ գործում են վճարովի ավտոկայանատեղեր: Այսպէս, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործում է երկու ավտոկայանատեղ՝ երկուսն էլ Րաֆֆու եւ Սվաճյան փողոցների միջանկյալ հատվածում: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում է թվով 8 վճարովի ցերեկային ավտոկայանատեղի՝ Ռելե գործարանի դիմաց, Ահարոնյան 2, Ներսիսյան 9, Դ. Անհաղթի 23, Ներսիսյան 7, Ֆանարջյան 76 հասցեներում, ինչպէս նաեւ 2 ավտոկայանատեղի “Հաղթանակ” զբոսայգու մոտ: Նոր Նորք վարչական շրջանի պատասխան գրության համաձայն՝ այս վարչական շրջանի ենթակայության վճարովի 5 ավտոկայանատեղերը հանձնված են ենթավարձակալության եւ գործում են Թիվ 2 շտապ օգնության հիվանդանոցի մուտքի հարակից տարածքում (Գյուրջյան փողոց), Գայի պողոտայում՝ “Նորք” ունիվերսամի դիմացից մինչեւ բենզալիցքակայան ընկած հատվածում գտնվող երկու գրպանիկներում, Մաֆարյան փողոցի բաղնիքի հարակից տարածքում, Թիվ 7 շուկայի կենտրոնական մուտքի աստիճանների հարակից՝ Գայի պողոտայի վրա գտնվող գրպանիկներում, Թիվ 7 շուկայի հարակից՝ Մաֆարյան փողոցի կողմից դեպի Գայի պողոտա ընկած ձախակողմյան հատվածում գտնվող գրպանիկներում: Աջափնյակ վարչական շրջանում գործում է 1 վճարովի ավտոկայանատեղի՝ Մարգարյան եւ Բաշինջաղյան փողոցների խաչմերուկում:

Միակ պատասխանը, որտեղ բովանդակային առումով ԻԱԿ-ի՝ տեղեկատվություն ստանալու հարցմամբ առաջադրված հարցերից եւ ոչ մեկին պատասխան չի տրվել, Երեւանի Կենտրոն վարչական շրջանի պատասխան գրությունն է: Այս գրության մեջ նշված էր, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երեւան քաղաքը ձեռք է բերել իրավական նոր կարգավիճակ՝ Երեւան համայք, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերանայելու Երեւան քաղաքում ավտոկանգառների վարձակալության եւ շահագործման տրամադրման կարգը, որը Երեւանի քաղաքապետարանում գտնվում է քննարկման փուլում: Իսկ թե գործում են վճարովի կայանատեղեր կամ կան արդյոք կնքված պայմանագրեր, որեւէ բան ասված չէր:

Պատասխան գրությունների ստացման ժամկետների առումով լավագույնը Նուբարաշեն, Նորք-Մարաշ, Աջափնյակ եւ Նոր Նորք վարչական շրջաններն են, որոնք Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին պատասխանել են մինչեւ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետը լրանալը. ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել էր 28.06.2010թ., իսկ Նուբարաշենի թաղապետարանի պատասխան գրությունը ստացել էր 1-օրյա, Նորք-Մարաշ, Աջափնյակ եւ Նոր Նորք համայքների պատասխան գրությունները՝ 3-օրյա ժամկետներում:

Մնացած բոլոր վարչական շրջանները ԻԱԿ-ի հարցումներին պատասխանել են Քանաքեռ-Զեյթունը ԻԱԿ-ի կողմից հարցումն ուղարկելուց հետո՝ 7, Դավթաշեն, Շենգավիթ, Ավան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանները՝ 8, Էրեբունի, Արաբկիր վարչական շրջանները 9-օրյա ժամկետներում:

Ժամկետների առումով վատագույնը Կենտրոն վարչական շրջանն է, որի պատասխան գրությունը թեև թվագրված էր 09.07.2010թ., այսինքն պատասխան գրությունն ուղարկվ է հարցումն ուղարկելուց 10 օր հետո, սակայն հարցման պատասխանը ԻԱԿ-ը ստացել է երեք շաբաթյա ուշացումով:

Գրեթե բոլոր վարչական շրջանները ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցումներին տվել են լիարժեք եւ պատշաճ պատասխան: Այսպես, Արաբկիր, Էրեբունի, Ավան, Շենգավիթ, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Քանաքեռ-Զեյթուն եւ Աջափնյակ վարչական շրջանները տվել են սպառիչ պատասխաններ: Սակայն պետք է նշել, որ Քանաքեռ-Զեյթուն եւ Աջափնյակ վարչական շրջաններից բացի, մնացած բոլոր վարչական շրջաններում վճարովի ավտոկայանատեղեր չեն գործում, հետեւաբար նաեւ չկան կնքված պայմանագրեր: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում թեև գործում է վճարովի 8 ավտոկայանատեղ, սակայն այս դեպքում նույնպես պայմանագրեր առկա չեն, քանի որ այդ բոլոր ավտոկայանատեղերի սպասարկումն իրականացնում է “Երթաշարժ” ՓԲԸ-ը, որն ամբողջությամբ պատկանում է վարչական շրջանին: Լավագույնը Աջափնյակ վարչական շրջանի պատասխանն է. գրության մեջ նշված էին ԻԱԿ-ի հարցման բոլոր հարցերի պատասխանները, ինչպես նաեւ տրամադրվեցին վարչական շրջանում գործող միակ վճարովի ավտոկայանատեղի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներին թերի են պատասխանել Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք եւ Կենտրոն վարչական շրջանները: Մալաթիա-Սեբաստիա եւ Նոր Նորք վարչական շրջանները թեև պատասխանել են ԻԱԿ-ի հարցման մեջ առաջադրված հարցերին, սակայն չեն տրամադրել վարչական շրջաններում գործող վճարովի ավտոկայանատեղերի սպասարկման համար կնքված պայմանագրերի պատճենները:

Ինչպես ժամկետների, այնպես էլ պատասխան գրության պատշաճության առումով ամենավատ արդյունքը կրկին Կենտրոն վարչական շրջանինն էր: Կենտրոն թաղապետարանն ըստ էության այդպես էլ չի պատասխանել ԻԱԿ-ի առաջադրած եւ ոչ մի հարցի:

Թերի պատասխաններ տրամադրելու համար Մալաթիա-Սեբաստիա եւ Նոր Նորք վարչական շրջանների ղեկավարները, իսկ Կենտրոն վարչական շրջանի ղեկավարն ընդհանրապես տեղեկություն չտրամադրելու համար ընդգրկվեցին ԻԱԿ-ի եռամսյակային Սեւ ցուցակում:

Այսպիսով, Արաբկիր, Էրեբունի, Ավան, Շենգավիթ, Դավթաշեն, Նորք-Մարաշ, Նուբարաշեն համայնքներում չկան վճարովի ավտոկայանատեղեր, հետևաբար՝ այստեղ ավտոկայանման համար գումարների գանձումն ապօրինի է, իսկ Մալաթիա-Սեբաստիա, Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք եւ Աջափնյակ համայնքներում վճարովի ավտոկայանատեղեր գործում են միայն վերոնշյալ հասցեներում: Այլ տեղերում ավտոկայանման համար գումար պահանջելը եւս անօրինական է: